

ԲԱԲԱԽՈՒՄՆԵՐ (1901-1903)

1. ԳԻՇԵՐԻՆ ԵՐԱԶԱՆԵԸ

Աղջամուղջին մեջ գիշերը կ'երագէ
Պայծառ այգուն վառ շրթները կեռասէ.
Ու ցնծութեան լոյս աստղերը կը ժպտին
Հրաշափառ գոգն հրճուանքի կապոյտին.

Բայց երբեմն ալ մղձաւանջի մը մեջ թունդ
Գիշերն այգը կ'երագէ գերթ մէկ անդունդ.
Ու հեւքէն վերջ ոռնումներու բիրտ հովին
Անձրեւի յորդ արցունքները կը թորին:

1903, Յունուար

2. ՅԻՇԱՏԱԿԸ

4. Մկրտիչեանի յիշատակին

Զմրան ցրտին հովերէն վերջ
Զըւարթ գարունը ժպտեցաւ.
Ընծիւղեցան թուփերն, ու պերճ
Ծաղիկները ծլան կարգաւ.

Բայց յիշատակն անոր, աւա՛ղ,
Հողին տակը թաղուած մնաց.
Լքուած հոգւոյն անունը վաղ
Մոռացօնքի վիհին գնաց:

1902, Հոկտեմբեր

3. ՓՈՒԼՁԵՐԸ

9. Շահինեանի յիշատակին

Դեռ չողջունած երագներու ցինջ առտուն՝
Հովէն փչուած մոմի մը պէս շիջար դուն:
Տերեւին 1 հետ հովերն ըզքեզ ալ տարին
Միացընել մահուան ահեղ շրջապարին: